ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1528

17.04.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի ապրիլի 13-ի Դիտորդական խմբի հերթական նիստի ընթացքում՝ նիստին մասնակից 11 անդամները, հիմք ընդունելով 03.04.2015 թվականի թիվ 05-0415 արձանագրությամբ խմբի կողմից հաստատված <<ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբում փորձագետի ներգրավվման և աշխատանքների իրականացման կարգը>> որոշումը, խումբը որոշել է Սուրեն Իսկանդարյանին և Արտուր Հարությունյանին ընդգրկել Դիտորդական խմբում՝ որպես փորձագետ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

Հ. Սահակյան

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 1762
«20» 04 2015 թ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ թիվ 2528
«20» 04 2015թ.

ՀՀ ք.Երևան 0009, Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1417 <<05>> 05 2015թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ
Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ի պատասխան Ձեր 17.04.2015թ. թիվ 2621/1528 գրության:

ՀՀ ոստիկանության պետի 2005թ.-ի հունվարի 14-ի <<ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը հաստատելու մասին>> հրամանով հասարակական դիտորդների խմբում փորձագետ ներգրավելու վերաբերյալ որևէ իրավադրույթ սահմանված չէ, հետևաբար նշված իրավական ակտի կարգավորման առարկայից դուրս ցանկացած նախաձեռնություն կամ գործելաոճ անընդունելի է, չի բխում հիշյալ հրամանի պահանջներից և չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք:

Միաժամանակ, ՀՀ ոստիկանությունը կրկին անգամ հիշեցնում է, որ անհրաժեշտ է հասարակական դիտորդների խմբի գործունեության կանոնակարգման ոլորտում առաջնորդվել բացառապես ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանի դրույթներով:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ